Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

United Nations Development Fund for Women
UNIFEM

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER
EDRC

# Գենդերային իրավիճակը Հայաստանում

Կարինե Հարությունյան

Երևան 2009



## Ի՞նչ իրավական գործիքներով են ապահովվում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը և հավասար հնարավորությունները

- ✓ ՀՀ Սահմանադրության 14-րդ և 35-րդ հոդվածները, որոնք ամրագրում են կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն ու հավասար հնարավորությունները
- ✓ Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի (ԱՀՌԾ) գործընթացը, որտեղ գենդերային քաղաքականության մշակումը, և մարդու իրավունքների պաշտպանությունը հիմնական բաղադրիչներից է (2000 թ.)
- ✓ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) թիվ 3-րդ, 5-րդ նպատակները՝ Գենդերային հավասարության օժանդակում և կանանց իրավունքների ընդլայնում, Մայրական առողջության բարելավում (2000թ.)
- ✓ ՀՀ-ում կանանց իրավիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. գործողությունների ազգային ծրագիր
- ✓ Թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագիր (2007 թ.)
- ✓ Աշխատանքային օրենսգիրք (Հ.117, Հ.178.2, Հ180.3, Հ.221.4), Դատական օրենսգիրք (Հ.117.3), Ընտանեկան օրենսգիրք (Հ.24)



## Ի՞նչ իրավական գործիքներով են ապահովվում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն և հավասար հնարավորությունները

***ՄԱԿ-ի միջազգային համաձայնագրեր, այդ թվում՝***

- ✓ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիա (CEDAW) (1994 թ.)
- ✓ Միջազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիա (2003թ.)
- ✓ Կանանց քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (2007թ.)
- ✓ Պեկինի 4-րդ միջազգային համաժողովի հանձնարարականներ

***Եվրախորհրդի միջազգային համաձայնագրեր, այդ թվում՝***

- ✓ Եվրոպական սոցիալական խարտիան (2003 թ.)
- ✓ Մարդու իրավունքների և անօտարելի ազատության մասին եվրոպական կոնվեվցիայի թիվ 12 և թիվ 14 արձանագրություններ (2004 թ.)

***Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) մի շարք դաշնագրեր,այդ թվում՝***

- ✓ Աշխատանքի վերահսկողության (2004թ.), հարկադրված աշխատանքի (2004թ.), նվազագույն աշխատավարձի սահմանման (2004թ.), աշխատողների պահանջների (2005թ.), վարձատրվող արձակուրդի մասին (2005թ.):



## ՀՀ-ում գենդերային հավասարությանն ուղղված նախաձեռնությունները.

- «Գենդերային հավասարության մասին» օրենքի նախագիծ
- Կառավարության ծրագրով նախատեսված միջոցառումներ
- Քաղաքական կուսակցությունների վերաբերյալ քվոտա
- Գյուղական վայրերում ապրող կանանց շրջանում տնտեսական գործունեության ընդլայնում
- Գենդերային հատուկ դասընթացներ համալսարաններում և դպրոցներում
- Եվրախորհրդի պատվիրակությունների մասնակցությամբ գենդերային հավասարության վերաբերյալ սեմինարներ (2004-2005 թթ.)
- Հարավային Կովկասում գեների և քաղաքականության ծրագիր ( 2004 թ.)
- Տարածաշրջանային կոնֆերանս. ճանապարհ դեպի սոցիալական արդարություն և հավասար հնարավորություններ (2008թ.)



## Կանանց, հատկապես, ո՞ր իրավունքներ են շարունակվում ոտնահարվել Հայաստանում

- Կանանց սահմանափակ մասնակցություն տնտեսական, քաղաքական ու սոցիալական կյանքին
- Կանանց նկատմամբ բռնությունների տարածվածություն
- Թրաֆիքինգի վտանգ և դրա դեմ պայքարին ուղղված անբավարար քաղաքականություններ, այդ թվում՝ օրենսդրական
- Կանանց վերարտադրողական առողջության և, ընդհանրապես, կանանց առողջական վիճակի վատթարացում
- Հասարակությունում, ինչպես նաև ընտանիքում ձևավորված կարծրատիպեր, ավանդույթներ
- Կանանց գործազրկության բարձր մակարդակ
- Գյուղացի կանանց իրավիճակ
- Աղքատության ֆեմինիզացիա
- Սեռական փոխանցվող հիվանդությունների վտանգ

# Վիճակագրություն

- ✓ՀՀ բնակչությունը կազմում է 3.2 մլն մարդ, որից 52.2 տոկոսը կանայք են:
- ✓Աղքատ բնակչության մեջ կանանց աղքատության մակարդակը կազմում է 54.8%:
- ✓Կանանց գործազրկության մակարդակը կազմում է 35%, իսկ տղամարդկանցը՝ 21.9%:
- ✓Գրանցված գործազուրկների մոտ 72%, իսկ զբաղվածների 48.1%-ն են կանայք:
- ✓2004-2007թթ. կանանց միջին աշխատավարձը ավելացել է 1.9 անգամ, սակայն այն 40%-ով ցածր է տղամարդկանց միջին աշխատավարձից:
- ✓Գյուղատնտեսությունում զբաղված են կանանց 48.7%-ը, իսկ տղամարդկանց՝ 43.5%-ը:
- ✓Կրթության ոլորտում զբաղված են կանանց 14.4%-ը, իսկ տղամարդկանց՝ 4.4%-ը: Ընդ որում ՀՀ մանկավարժների 76.3%-ը կանայք են:
- ✓Առողջապահության ոլորտում զբաղված են կանանց 8.1 %-ը, իսկ տղամարդկանց՝ 1.4 %-ը: Ընդ որում, զբաղված տղամարդկանց միջին աշխատավարձը 1.6 անգամ գերազանցում է կանանց աշխատավարձը, որոնք կազմում են ընդամենը ոլորտում զբաղվածների 83.2 %-ը:

# Վիճակագրություն

- Տնային տնտեսությունների 38.1%-ը գլխավորում են կանայք:
- Կին գլխավորով տնային տնտեսությունների անդամների ծայրահեղ աղքատության մեջ հայտնվելու ռիսկը մոտ 30%-ով գերազանցում է մյուս տնային տնտեսություններինը:
- ՀՀ ԱԺ աշխատակազմում կանայք կազմում են 8.6%, իսկ նախարարների և փոխնախարարների կազմում՝ 5%:
- Միայն 2009 թ. առաջին կիսամյակում հայտնաբերվել է թրաֆիքինգի 44 նոր զոհ:
- Բնակչության 35.5%-ը գտնում է, որ չպետք է միջամտել ամուսնու կողմից կնոջ նկատմամբ դրսևորած ֆիզիկական ճնշումներին (2007թ, Կանանց իրավունքների կենտրոն):
- Կանանց և տղամարդկանց եկամտաբեր աշխատաժամանակը կազմում է համապատասխանաբար՝ 1.5 և 5 ժամ, տնային հոգսերի վրա ծախսում են հմպտ.՝ 6 և 1 ժամ, ազատ ժամանակը կազմում է հմպտ.՝ 4.5-5 և 6 ժամ:



## «Գենդերային բյուջետավորումը Հայաստանում» ծրագրի նպատակը և արդյունքները

***Կանանց տնտեսական անվտանգության բարելավում՝պետական և մասնավոր ռեսուրսների բաշխման և վերահսկման գործընթացներում նրանց մասնակցության աճի ապահովմամբ:***

✓ Բյուջեի գենդերային բյուջետավորման հավելվածի կազմում և վերջինիս փորձնական կիրարկում ՀՀ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունում

✓Մեթոդաբանության մշակում ԿԶԾ, ՄԺԾԾ, պետական և տեղական բյուջեների վերլուծության համար

✓Գենդերային պարզեցված բյուջեի կազմում, գենդերային բյուջետավորման ուղեցույցների մշակում

✓ Արդեն իսկ առկա դիսագրեգացված տեղեկատվության, այդ թվում՝ ժամանակի օգտագործման հետազոտությունների վիճակագրության օգտագործում, ինչպես նաև գենդեր զգայուն վիճակագրության ձևավորում

✓ Ազգային և տեղական մակարդակներում քաղաքացիական հասարկության գենդեր վերլուծության և բյուջետավորման ունակությունների կատարելագործում

✓ Պետական համակարգում զբաղված բյուջետային և գենդերային փորձագետների ուսուցանում և հմտությունների կատարելագործում՝ հաշվի առնելով վերջիններիս դերը բյուջետային գործընթացում:

# Շնորհակալություն